ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ
Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՇԻՐԻՄԻՆ

Հունիսի 19-ին, հինգշաբթի օրը, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուղևորվեց Օշական՝ մասնակցելու Ս. Սահակի և Ս. Մաշտոցի մեծարման տոնակատարությանը՝ իր հարգանքը մատուցելու մեր մեծ թարգմանիչների հիշատակին, խոնարհվելու Մեսրոպ Մաշտոցի սուրբ շիրիմին: Արագածոտնի թեմի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Հայոց Այբուբենի ստեղծման 1500-ամյա հոբելյանի առթիվ, իր անդրանիկ եպիսկոպոսական պատարագն էր մատուցում թեմական առաջնորդ նորաօծ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Սրբազան Հայրը պատմական մի ակնարկ կատարեց և գնահատանքի ու երախտիքի ջերմ խոսքերով արժևորեց Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթև Կաթողիկոսի անձնուրաց և ազգանվեր գործը: Ստեղծելով Հայոց Այբուբենը և իրենց աշակերտների հետ միասին կատարելով Աստվածաշնչի թարգմանությունը, նրանք երկնային ճշմարտությունը, Ամենազոր Աստծո խոսքը հասու դարձրեցին հայ ժողովրդին, բյուրեղացրեցին ոչ միայն հայոց լեզուն, այլ նաև հայ միտքը, մտածողությունը և իմացականությունը, զորացրեցին նրա թաքնված մտավոր ուժն ու կորովը: Մի նոր ծաղկում ու զարգացում ապրեցին հայ մշակույթը, գեղանկարչությունը, ճարտարապետությունը, երաժշտությունը:

Պատարագի ավարտին Սրբազան Հայրը մի հատված ընթերցեց Վահան Թեքեյանի բանաստեղծությունից՝ նվիրված Օշականին:

Այնուհետև հավատացյալ և ուխտավոր ժողովրդին, բոլոր ներկա գտնվողներին իր հայրապետական պատգամը տվեց Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը կոչ արեց հայ ժողովրդին սրբությամբ և աչքի լույսի պես պահպանել մեր մայրենին, անաղարտ պահել այն, ունկնդիր լինել և հետևել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի պատվիրաններին: Խոսքի ավարտին Գարեգին Ա Կաթողիկոսը սրտանց շնորհավորեց և իր հայրապետական օրհնանքը տվեց Տ. Նավասարդ եպս. Կճոյանին անդրանիկ եպիսկոպոսական պատարագի առիթով՝ մաղթելով նրան արժանի լինել իր նոր կոչմանը, նվիրվածությամբ ծառայել Հայ Առաքելական Եկեղեցուն և իր հոտին:

Արարողությանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Հրաչյա Գրիգորյանը, Աշտարակի քաղաքապետ Կարեն Գևորգյանը, Ապարանի քաղաքապետ Ռուբեն Հայրապետյանը, Մայր Աթոռի միաբաններ, հավատացյալ ժողովուրդ՝ հոծ բազմությամբ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ